

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍՏԵՐ

*22.01.2007թ. նիստին*

### *Մասնակցում էին՝*

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Վ. Դավթյանը, Գ.Անանյանը, Վ.Դանիելյանը, Ա.Աղազարյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Ա.Աղազարյանը:

### *Հրավիրված էին՝*

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Մ. Թամազյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ Ա. Գյուլբենկյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը:

### *Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.*

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հուլիսի 24-ի թիվ 58 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:

*/Զեկուցող՝ Գ. Գյուրջյան/*

### *Որոշեցին՝*

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2001 թվականի հուլիսի 24-ի թիվ 58 որոշումը:

*/Նորմատիվ/*

Միաժամանակ, հաշվի առնելով վիճակագրական աշխատանքներում Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի վերախմբագրված տարբերակի կիրառման հանգամանքը, Խորհուրդը որոշեց հանձնարարել.

1. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրություն վարող ստորաբաժանումներին՝ վիճակագրական տեղեկատվության մշակման, ամփոփման և հրատարակման աշխատանքներում կիրառել Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի վերախմբագրված տարբերակը:

2. ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետին՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրություն վարող ստորաբաժանումներին իրազեկել Տնտեսական գործունեության տեսակների Հայաստանի դասակարգչի փոփոխությունների վերաբերյալ:

*/Արձանագրային/*

**2. «Օգտագործված արտադրանքի (ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների) և պաշարների վերաբերյալ» միանվագ հետազոտության Ձև թիվ 1-ՄՍ հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին:**

*/Զեկուցող՝ Մ. Թամազյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել «Օգտագործված արտադրանքի (ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների) և պաշարների վերաբերյալ» միանվագ հետազոտության Ձև թիվ 1-ՄՍ հարցաթերթը և լրացման հրահանգը՝ համաձայն հավելվածի:

*/Նորմատիվ/*

**3. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

3.1 Հաշվետվություն 2006թ. նոյեմբերի 27-29-ը Ալմաթիում կայացած «Գիտության, տեխնոլոգիայի և նորամուծության ցուցանիշներ. միտումներ և խնդիրներ» աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Ն. Բաղդասարյան/*

**Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն 2006թ. նոյեմբերի 27-29-ը Ալմաթիում կայացած «Գիտության, տեխնոլոգիայի և նորամուծության ցուցանիշներ. միտումներ և խնդիրներ» աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ հաղորդումը:

*/Արձանագրային/*

3.2 Հաշվետվություն 2006թ. դեկտեմբերի 11-15-ը «Ազգային հաշիվների կատարելագործում/«Ծախսեր-թողարկում» աղյուսակների մշակում և ներդրում» թեմայով Աթենք կատարած աշխատանքային այցելության վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Վ. Դանիելյան, Մ. Թամազյան, Ս. Խաչատրյան, Ն. Աստվածատուրովա/*

**Որոշեցին՝**

Ընդունել ի գիտություն 2006թ. դեկտեմբերի 11-15-ը «Ազգային հաշիվների կատարելագործում/«Ծախսեր-թողարկում» աղյուսակների մշակում և ներդրում» թեմայով Աթենք կատարած աշխատանքային այցելության վերաբերյալ հաղորդումը:

*/Արձանագրային/*

3.3 Հաշվետվություն 2006թ. դեկտեմբերի 11-15-ը Մոսկվայում կայացած «ԱՊՀ երկրներում 2005թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար ներդրումային ապրանքների, շինարարության բաղադրամասերի և ոչ շուկայական ծառայությունների գնային տեղեկատվության քննարկման և համաձայնեցման նպատակով» աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը մասնակցության վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Մարտիրոսյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 2006թ. դեկտեմբերի 11-15-ը Մոսկվայում կայացած «ԱՊՀ երկրներում 2005թ. տվյալներով միջազգային համադրումների ծրագրով աշխատանքների իրականացման համար ներդրումային ապրանքների, շինարարության բաղադրամասերի և ոչ շուկայական ծառայությունների գնային տեղեկատվության քննարկման և համաձայնեցման նպատակով» աշխատանքային սեմինար-խորհրդակցությանը մասնակցության վերաբերյալ հաղորդումը:

*/Արձանագրային/*

3.4 Հաշվետվություն 2006թ. դեկտեմբերի 12-14-ը ՄԱԿ-ի Վիճակագրության բաժանմունքի հրավերով Նյու Յորքում կայացած «Գեոդերային վիճակագրության զարգացումը 2010թ. մարդահամարների շրջանակների կոնտեքստում» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ. Գևորգյան, Ա. Գյուլբենկյան/*

***Որոշեցին՝***

Ընդունել ի գիտություն 2006թ. դեկտեմբերի 12-14-ը ՄԱԿ-ի Վիճակագրության բաժանմունքի հրավերով Նյու Յորքում կայացած «Գեոդերային վիճակագրության զարգացումը 2010թ. մարդահամարների շրջանակների կոնտեքստում» խորագրով աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ հաղորդումը:

*/Արձանագրային/*

***07.02. 2007թ. նիստին***

***Մասնակցում էին՝***

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Վ. Դավթյանը, Գ.Անանյանը, Յու. Պողոսյանը, Ա.Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Գ. Գյուրջյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման, մարկետինգի և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Ն. Մուշեղյանը:

**Լսեցին՝**

«2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը» հաստատելու մասին զեկույցը:

*/Զեկույցող՝ Ն. Մուշեղյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել 2006 թվականի պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելված 1-ի:

*/Անհատական/*

**13.02.2007թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ. Գևորգյանը, Գ.Անանյանը, Վ. Դավթյանը, Վ.Դանիելյանը, Յու. Պողոսյանը, Ա. Աղազարյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար Հ. Գրիգորյանը:

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանը, ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական Ջ. Միրզոյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ. Սարոյանը:

**Լսեցին՝**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի, ըստ ծրագրերի, 2006 թվականի հաշվեկշիռները հաստատելու մասին զեկույցը:

*/Զեկույցող՝ Ա. Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2006 թվականի հաշվեկշիռը՝ ըստ ծրագրերի. (հավելված 1):

*/Անհատական/*